Վեհափառ Կաթուղիկոսը յիշեալ կոնդակի հետ ուղարկել էր նաեւ յանուն Բուլղարեան եղբարց գրած ի 18 յունվ. հմ. 35 օրհնութեան կոնդակն, որով Վեհ. Կաթուղիկոսը վանական դպրոցի բացման մասին յայտնելով իւր ուրախութիւնը՝ օրհնումէ Բուլղարեան եղբարց և նոցա ձեռնարկը, և այն կոնդակի պատճէնն հետեւեալն է ։

ԿՆԻՔ
1885

ՄԱԿԱՐ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց . . .

,, Հարազատ որդւոց Առաքելական Մայր Աթոռոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի եւ մեր՝ եղբարց Բուլղարեանց բարեպաշտից, յարգելեացն՝ Մովսիսի, Եղիայի, Ենովքայ, Սմբատայ եւ Երուանդայ՝ զՑիստասանողն նուիրեմք ողջոյն եւ զԱստուածային բազմապատիկ օրհնութիւն ։

,, Յայտարար գրութեամբ վիճակաւոր Առաջնորդին թեմին Հայոց Շամախւոյ՝ գերապատիւ Մեսրովբ Արքեպիսկոպոսի եհաս ի լուր մեր բերկրալի համբաւ բացման Բուլղարեան վանական ուսումնարանի վանիցն Սաղիանու, զոր բարեպաշտութիւնք Ձեր շարժեալ յերախտագիտական զգացմանց սրտից Ձերոց՝ ցանկացեալ էիք բանալ ի յիշեալ վանս յանուն եւ ի յիշատակ ի Տէր հանգուցեալ եղբօր Ձերոյ՝ բարեյիշատակ Թադէոս Աւագ քահանայի Բուլղարեանց, ի յարատեւ գոյութիւն եւ յապահովութիւն այնորիկ նուիրելով յարդար վաստակոց ձերոց զտասն հազար րուբլիս՝ իբրեւ դրամագլուխ անձեռնմխելի ։

,, Ուրախացեալ մեր ի սիրտ եւ մխիթարեալ ի հոգի ընդ այդ օրինակ գործ բարեպաշտութեան եղբարցդ հարազատից, որով ի տես համազգեացդ ձերոց ակներեւ փայլեցուցիք զվեհ եւ զԱստուածահաճոյ զգացմունս երախտագիտութեան ձերոյ առ հանգուցեալ եղբայր ձեր, հարկ անհրաժեշտ վարկաք յԱռաքելական Աթոռոյ աստի Հայրապետութեան մերոյ՝ մատուցա-